


«ԲԱԺՆԵՏՈՄՍ ՆՎԵՐ»
ԱԿՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ



Հայտարարություն

2024 թվականի մայիսի 27 ժամը 13:00-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 27-ը ժամը 23:59-ը ներառյալ կգործեն «Բաժնետոմս նվեր» ակցիայի հետևյալ պայմանները (այսուհետ՝ Կանոններ) :

1. Ակցիայի բովանդակությունը և նպատակը.

«Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), նոր հաճախորդներ ներգրավելու՝ արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու նպատակով, իրականացնում է ակցիա, որի շրջանակներում ֆիզիկական անձինք, Կանոններով սահմանված պայմաններին համապատասխանելու/հետևելու դեպքում, հնարավորություն ունեն Ընկերությունից ստանալ նվեր:

2. Ակցիայի պայմաններ.

Ակցիային հնարավորություն ունեն մասնակցելու այն անձինք, ովքեր 2024 թվականի մայիսի 27-ից ժամը 13:00-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 27-ը ժամը 23:59-ը ներառյալ կհամապատասխանեն/կհետևեն հետևյալ պայմաններին **միաժամանակ**.

- 2.1. Հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացի,
- 2.2. Լրացել է 18 (տասնութ) տարեկանը,
- 2.3. Ակցիայի գործողության ընթացքում Ընկերության «Գործարար հարաբերությունների պայմաններին» համապատասխան բացել են Բրոքերային հաշիվ,
- 2.4. Չունեն և/կամ չեն ունեցել բրոքերային հաշիվ Ընկերությունում:
- 2.5. **Միանվագ** համալրել են իրենց հաշիվը 25 000 քսանհինգ հազար և ավել ՀՀ դրամով կամ համարժեք արտարժույթով¹, **որը չի ներառում երրորդ անձանց կողմից գանձված միջնորդավճարները, բացառությամբ քարտային փոխանցումների միջոցով համալրման դեպքում:**
- 2.6. Համաձայնություն են տվել կնքել Բաժնետոմսի նվիրատվության պայմանագիր (Հավելված 2): Բաժնետոմսի նվիրատվության պայմանագրի կնքումն իրականացվում

¹Համարժեք արտարժույթի գումարը հաշվարկվում է հաշվի համալրման նախորդ օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված միջին փոխարժեքով:

Է առանց լրացուցիչ հանձնարարականների՝ տնօրենի 20.11.2024թ.-ի թիվ 2 Հրամանի և մասնակցի կողմից Հավելված 2-ի հաստատման հիման վրա:

3. Ակցիայի ժամկետը.

Ակցիան գործում է 2024 թվականի մայիսի 27-ից ժամը 13:00-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 27-ը ժամը 23:59-ը ներառյալ (3 ամիս):

4. Ակցիայի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները.

4.1. Մասնակից կարող են դառնալ այն անձինք, ովքեր պահպանել են սույն Կանոնների բոլոր պայմանները **միաժամանակ**:

Ակցիայի մասնակից **չեն կարող** հանդիսանալ հետևյալ անձինք.

4.1.1. Չեն հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքացի.

4.1.2. Իրավաբանական անձինք.

4.1.3. 18 տարեկանը չլրացած անձինք.

4.1.4. Բրոքերային հաշիվ ունեն և/կամ ունեցել են մինչև 2024 թվականի մայիսի 27-ը:

4.2. Ակցիայի Կանոնների մասին ամբողջ տեղեկատվությունը հրապարակված է <https://ffin.am/promo/> վեբ կայքում:

4.3. Ընկերությունը պարտավորվում է բրոքերային ծառայությունների մատուցման մասին պայմանագրի կնքման և սույն 2.5 կետով նախատեսված օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդի հաշվին փոխանցել նվեր բաժնետոմսը:

4.4. Նվիրատվության պայմանագրի առարկա է հանդիսանում (<https://ffin.am/promo/>) ցուցակում նշված բաժնետոմսերից մեկը:

4.5. Բաժնետոմսը շնորհվում է պատահական ընտրությամբ, մասնակիցը չի կարող ինքն ընտրել բաժնետոմսը: Ընկերությունն իրավունք ունի կայքում նշված բաժնետոմսերը փոխել իր հայեցողությամբ:

4.6. Յուրաքանչյուր մասնակից կարող է նվեր ստանալ միայն մեկ բաժնետոմս:

4.7. Բաժնետոմսը հասանելի կլինի Tradernet անձնական հաշվում՝ «ոչ առևտրային հաշիվ» բաժնում:

4.8. Նվեր հանդիսացող բաժնետոմսը կարելի է վաճառել նվեր ստանալու օրվանից սկսած երեք ամիս հետո (արգելափակման ժամկետ):

4.9. Բաժնետոմսի սեփականության իրավունքը հաճախորդին փոխանցելու վերաբերյալ գրանցման հետ կապված բոլոր ծախսերը կրում է Ընկերությունը:

4.10. Ընկերությունը պարտավոր է հրապարակել ակցիայի դադարեցման մասին տեղեկատվությունը ffin.am պաշտոնական աղբյուրում կամ հրապարակայնորեն տեղեկացնել նման դադարեցման մասին այլ կերպ:

5. Ակցիայի մասնակցության և նվեր ստանալու կարգը.

5.1. Ակցիայի մասնակցելու համար անհրաժեշտ է կատարել սույն Կանոնների բոլոր պայմանները **միաժամանակ**:

5.2. Սույն Կանոններով սահմանված կարգով և Ընկերության «Գործարար հարաբերությունների պայմաններին» համապատասխան Մասնակցի և Ընկերության միջև կնքվել է ծառայությունների մատուցման Համաձայնագիր (Հավելված 2):

5.3. Մասնակիցն ընդունում և հաստատում է Հավելված 2 սահմանված բոլոր պայմանները:

5.4. Մասնակիցը Բրոքերային հաշվին **միանվագ** փոխանցում է 25 000 և ավել ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով գումար (USD, EUR, RUB):

5.5. Բրոքերային հաշվին **միանվագ** 25 000 և ավել ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթով գումար փոխանցելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը մասնակցի ոչ առևտրային հաշվին փոխանցում է նվերը՝ բաժնետոմսը:

6. Բողոքները և դրանց վավերականության ժամկետը

6.1. Ակցիայի վերաբերյալ ցանկացած բողոք պետք է ուղղել «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ-ին +37412252252 հեռախոսահամարով, info@ffin.am էլ. հասցեով կամ գրել Ձեր անձնական Tradernet հաշվի «հայտեր և առաջարկներ» բաժնում: Բողոքի գրանցման ամսաթիվ է համարվում կատարված զանգի/ ուղարկված նամակի ամսաթիվը:

6.2. Մասնակիցը պետք է մանրամասն ու մատչելի ներկայացնի բողոքի բովանդակությունը: Բողոքում պետք է նշված լինի մասնակցի անուն, ազգանուն, հայրանունը, կոնտակտային հեռախոսահամար և բրոքերային հաշվի համարը, ինչպես նաև մասնակցի էլեկտրոնային հասցեն՝ նրա բողոքին պատասխանելու համար:

6.3. Բոլոր բողոքները կքննարկվեն՝ Ընկերության կողմից դրանք ստանալու օրվանից սկսած 15 աշխատանքային օրվա ընթացքում:

6.4. Ընկերությունը դիտարկում է բողոքները՝ հիմնվելով սույն Կանոնների վրա:

6.5. Բողոքի առարկայի վերաբերյալ Ընկերության որոշումը վերջնական է: Մասնակիցը Ընկերության որոշման մասին կտեղեկացվի հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ այլ միջոցով:

6.6. Ընկերությունը, օգտագործելով իր տեխնիկական միջոցները, ապահովում է ծառայությունների և համակարգի մշտական աշխատանքը՝ պահելով այն բարձր մակարդակի վրա: Այդուհանդերձ, Ընկերությունը պատասխանատվություն չի կրում այն խնդիրների համար, որոնք հնարավոր չէ վերացնել, չնայած որ դրա համար ձեռնարկվել են բոլոր հնարավոր միջոցները:

6.7. Ընկերությունն իրավունք է վերապահում ակցիայի անցկացման սույն Կանոններում փոփոխություններ կատարել՝ համապատասխան տեղեկատվություն հրապարակելով www.ffin.am կայքում: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

6.8. Բոլոր վեճերն ու տարաձայնությունները, որոնք կարող են առաջանալ պետք է լուծվեն ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

6.9. Բողոքներն ընդունվում և քննարկվում են ակցիայի ընթացքում:

**«Բաժնետոմս նվեր» ակցիայի շրջանակում Ֆիզիկական անձի Գործարար հիմնական
պայմաններին միանալու Դիմում/
Application to join the General Terms of Business for individuals according to promotion
“Stock as a gift”/**

**Заявление о присоединение к регламенту оказания услуг от физического лица в рамках
акции «Акция в подарок»**

№ _____

Անուն ազգանուն Name Surname Имя и фамилия	
Ծննդյան ամսաթիվ Date of Birth Дата рождения	
Անձնագիր/ID քարտ Passport/ ID card Паспорт/ID карта	
Տրամադրող մարմին Authorized body Орган выдачи документа	
Տրման ամսաթիվ Date of issue Дата выдачи	

Սույն դիմումով հայտնում եմ իմ ցանկությունը միանալու «Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») Գործարար հիմնական պայմաններին (այսուհետ՝ «Պայմաններ»), որը տեղադրված է Ընկերության վեբկայքում (www.ffn.am), որով նկարագրված է Ընկերության կողմից արժեթղթերով ներդրումային ծառայությունների տրամադրման ընդհանուր պայմանները: Հաստատում եմ նաև իմ

անվերապահ համաձայնությունը՝ Պայմանների և դրան կից հավելվածների բոլոր դրույթների վերաբերյալ:

With this application, I express my desire to join Freedom Finance Armenia LLC (hereinafter referred to as the Company) General Terms of Business (hereinafter referred to as the Terms) posted on the Company's website (www.ffin.am), which describes the Company's general conditions of providing investment services with securities. I also confirm my unconditional agreement to all provisions of the Terms and the attached annexes.

Настоящим заявлением я выражаю свое желание присоединиться к Регламенту оказания услуг (далее «Условия») ООО «Фридом Финанс Армения» (далее именуемое «Компания»), размещенным на веб-сайте Компании (www.ffin.am), в которых описывается деятельность Компании и общие условия предоставления инвестиционных услуг с ценными бумагами. Я также подтверждаю свое безоговорочное согласие со всеми положениями Условий и прилагаемых приложений.

Սույն դիմումով նաև իմ անվերապահ համաձայնությունն եմ հայտնում Ընկերության Պատվերների կատարման քաղաքականությանը, որը նույնպես տեղադրված է Ընկերության վեբկայքում (www.ffin.am):

With this application, I also express my unconditional agreement to the Company's Order Execution Policy, which is also posted on the Company's website (www.ffin.am).

Настоящим заявлением я также выражаю свое безоговорочное согласие с Политикой оказания услуг Компании, которая также размещена на сайте Компании (www.ffin.am).

Հաստատում եմ, որ տեղեկացված եմ ֆինանսական գործիքներում ներդրումների հետ կապված ռիսկերի մասին և անվերապահ ընդունում եմ, որ Ընկերությունը պատասխանատվություն չի կրում այդ գործառնությունների և դրանց հետևանքների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը խախտել է այդպիսի գործառնությունների կատարման համար Պայմաններով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

I am aware of risks associated with transactions with financial instruments and I unconditionally accept that the Company is not responsible for these operations and their consequences, except for the cases when the Company has violated the requirements set by the Terms or RA legislation for performing such operations

Я подтверждаю, что проинформирован о рисках совершения операций с финансовыми компаниями и безоговорочно принимаю, что Компания не несет ответственности за эти операции и их последствия, за исключением случаев, когда Компания нарушила требования, установленные Условиями или законодательством РА.

Ես հաստատում եմ, որ ծանոթացել եմ Ռիկսերի մասին ծանուցմանը, որը տեղադրված է Ընկերության վեբկայքում (www.ffin.am):

I confirm that I am acquainted with the Risk Notice, which is posted on the Company's website (www.ffin.am):

Я подтверждаю, что ознакомился с уведомлением о рисках, размещенным на веб-сайте Компании (www.ffin.am).

Ես հաստատում եմ, որ կարդացել եմ և հասկացել եմ Շահերի բախման քաղաքականությունը, որը տեղադրված է Ընկերության վեբկայքում (www.ffin.am), համաձայն եմ դրա բոլոր դրույթների հետ:

I confirm that I have read and understood the Prevention of Conflict of Interest Policy posted on the Company's website (www.ffin.am), I agree with all its provisions.

Я подтверждаю, что прочитал и понял Политику конфликта интересов, размещенную на сайте Компании (www.ffin.am), согласен со всеми ее положениями.

Ես հաստատում եմ, որ ծանոթացել եմ Գաղտնիության քաղաքականության մասին ծանուցմանը, հղում և **տալիս եմ իմ համաձայնությունը մշակել իմ անձնական տվյալները:**

I confirm that I am acquainted with the Privacy policy Notice, link and **give my consent to processing of my personal data.**

Я подтверждаю, что ознакомился с уведомлением о Политике конфиденциальности, ссылка и **даю свое согласие на обработку моих персональных данных.**

Ես հաստատում եմ, որ կարդացել եմ և հասկացել եմ «Բաժնետոմս նվեր» ակցիայի պայմանները, որոնք տեղադրված է Ընկերության վեբկայքում (www.ffin.am), համաձայն եմ դրա բոլոր դրույթների հետ:

I confirm that I have read and understood the terms and conditions of the “Stock as a gift” promotion posted on the Company's website (www.ffin.am), I agree with all its provisions.

Я подтверждаю, что прочитал и понял условия акции «Акция в подарок», размещенные на сайте Компании (www.ffin.am), согласен со всеми ее условиями.

Տալիս եմ իմ համաձայնությունը նվիրատվության պայմանագիր կնքելու համար, «Բաժնետոմս նվեր» ակցիայի պայմաններին համաձայն:

I give my consent to conclude the contract of donation under the terms of the “Stock as a gift” promotion.

Я даю согласие на заключение договора дарения, согласно условиям акции «Акция в подарок».

Անուն, Ազգանուն/ Name, Surname/Фамилия, Имя

Սույն Փաստաթուղթը ստորագրվում է էլեկտրոնային ձևով՝ համարին ուղարկված Բրոքերի կայքում մուտքագրելով SMS կոդը

This Document is signed in electronic form by entering the SMS code on the Broker's website sent to the number

Настоящий Документ подписан в электронной форме путем ввода SMS-кода на сайте Брокера, отправленного на номер

Ամսաթիվ/ Date/ Дата:

**«Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ Տնօրեն/Director of Freedom Finance Armenia
LLC/Директор ООО «Фридом Финанс Армения»
Հովակ Հովակիմյան/ Ovak Ovakimian/Овак Овакимян**